USAID FROM THE AMERICAN PEOPLE
International Foundation for Electoral Systems IFES SINCE 1987
unag UN Association of Georgia
ცესკო საქართველოს საარჩევნო ადმინისტრაცია

# საუბნო საარჩევნო კომისიის წევრთა სახელმძღვანელო ინსტრუქცია

# Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուղեցույց հրահանգ

# ИНСТРУКЦИЯ ПО РУКОВОДСТВУ ДЛЯ ЧЛЕНОВ УЧАСТКОВОЙ ИЗБИРАТЕЛЬНОЙ КОМИССИИ

პარლამენტის არჩევნები 2012



საარჩევნო სისტემების განვითარების, რეფორმებისა და სწავლების ცენტრი

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների

ուղեցույց հրահանգ

Հաստատվել է Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի

2012 թվականի օգոստոսի 3-ի № 31 որոշմամբ

## Ցանկ

**Մաս I.Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմը եւ աշխատանքի կարգը ........................ 3**

**Գլուխ I. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը .................................... 3**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման ճարգը եւ լիազորության ժամկետը ..... 3

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրության կարգը........................ 3

**Գլուխ II. Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքի կարգը....................................... 5**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց լիազորությունները ........................ 5

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերի նախապատրաստում.................................... 6

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի ընթացքը ................................................................ 6

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի արձանագրությունը............................................. 7

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության կարգը................................................ 7

Տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավական ակտերը...................................................... 8

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստում կարգադրություն ընդունելու կարգը ............. 9

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդգրկվածությունը եւ սահմանափակումները նախընտրական քարոզչությունում/ քարոզարշավում............................................................................ 9

**Մաս II. Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեությունը նախընտրական ժամանակաշրջանում ................................................................................................................................ 9**

**Գլուխ I. Ընտրացուցակներ .................................................................................................................. 9**

Համընդհանուր ընտրացուցակը եւ դրա հրապարակման կարգը ......................................................... 10

Համընդհանուր ընտրացուցակի տվյալների վերստուգում ................................................................ 11

Ընտրողների հատուկ ցուցակ................................................................................................................... 11

Շրջիկ քվեատուփի ցուցակի ձեւավորման կարգը .................................................................................. 11

Հատուկ ցուցակում եւ շրջիկ քվեատուփի ցուցակում մտցված ընտրողի ընտրական իրավունքը . 13

Ընտրողի կտրոն ......................................................................................................................................... 13

**Գլուխ II. Ընտրական փաստաթղթերի ընդունում եւ քվեարկության շենքի սարքավորում ............. 14**

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմում ........ 34
Ամփոփիչ արձանագրության հրապարակայնացում........ 35
Գրանցամատյանի, գրառումների գրքի զմռսում, ընտրական փաստաթղթերի փոխանցում տարածքային ընտրական հանձնաժողովին........ 35
**Մաս IV. Քվեարկության օրվա դիմում/բողոքներ........ 36**
**Գլուխ I. Քվեարկության օրվա դիմում/բողոքների գրանցում ........ 36**
Բողոքների գրանցման գործընթացի դիտարկում........ 36
Դիմում/բողոքների վրա թերության սահմանման կարգը........ 37
**Գլուխ II. Քվեարկության օրվա դիմում/բողոքին արձագանքում ........ 37**
**Հավելված №1.** Նիստի արձանագրության նմուշ........ 40
**Հավելված №2.** Նիստի արձանագրության նմուշ........ 46
**Հավելված №3.** Վրաստանի ընտրական վարչության կարգադրության նմուշ ........ 53
**Հավելված №4.** Ընտրական վարչության աստիճանավորների վարքի օրենսգիրքը ........ 56
**Հավելված №5.** Ընտրական հանձնաժողովին ներկայացված դիմում/բողոքի ռեկվիզիտներ ........ 58
**Հավելված №6.** Տեղեկանք դիմում/բողոքը մուտքագրելու մասին........ 59
**Հավելված №7.** Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի լիազորությունները ........ 60
**Հավելված №8.** Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները քվեարկության օրը ........ 69
**Հավելված №9.** Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթները ........ 72
**Հավելված №10.** Ընտրողներին հաշվարկող հանձնաժողովի անդամի գործառույթները........ 73
**Հավելված №11.** Շրջիկ քվեատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամի գործառույթները........ 75
**Հավելված №12.** Քվեատուփը եւ հատուկ ծրարները հսկող հանձնաժողովի անդամի գործառույթները........ 77

# Գլուխ I. Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորման կարգը եւ լիազորության

Տեղամասային ընտրական հանձնաժողովը բաղկացած է 13 անդամից (Ընտրական օրենսգիրք – Հոդված 24.1).

- 6 անդամի՝ մրցույթի հիման վրա ընտրում է Տարածքային ընտրական հանձնաժողովը,
- 7 անդամի նշանակում են կուսակցությունները:

**Ուշադրություն.**

Ընտրական հանձնաժողովի անդամը չի հանդիսանում իրեն նշանակող/ընտրող սուբյեկտի ներկայացուցիչը: Նա իր գործունեությունում անկախ է եւ ենթարկվում է միայն Վրաստանի օրենսդրությանը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունը սկսվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին հավաքման օրը եւ դադարում է համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը կազմելուն պես (Ընտրական օրենսգիրք - Հոդված 25.14):

**Ուշադրություն.**

Արգելված է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի վտարումը մինչեւ քվեարկության օրը 15 շուտ (սեպտեմբերի 16) (Ընտրական օրենսգիրք - Հոդված 29.9):

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրության կարգը

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.23; Հոդված 25.21)*

Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձինք են.

- Հանձնաժողովի նախագահը,
- Նախագահի տեղակալը,
- Հանձնաժողովի քարտուղարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ եւ քարտուղար ընտրվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստում (տես՝ Հավելված №1; №2),որը տեղի է ունենում մինչեւ ընտրությունների օրը 34-րդ օրից ոչ ուշ (օգոստոսի 28): Նիստը հրավիրվում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից: Նիստը իրավասու է , եթե դրան ներկա է հանձնաժողովի լրիվ կազմի մեծամասնությունը, 7

անդամից ոչ պակաս: Նիստը մինչև նախագահ ընտրելը ղեկավարում է հանձնաժողովի տարեց անդամը:

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի ընտրության կարգը

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 25)*

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ ընտրվում է հանձնաժողովի անդամներից, անվանական քվեարկությամբ, հանձնաժողովի լրիվ կազմի մեծամասնությամբ: Թեկնածու առաջադրելու իրավունք ունի հանձնաժողովի առնվազն 2 անդամ:

**Ուշադրություն՝**

- Միևնույն թեկնածուի անվանել կարելի է միայն երկու անգամ:
- Անվանված թեկնածուն իրավունք ունի մասնակցելու քվեարկությանը եւ ձայն տալ սեփական թեկնածության օգտին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի ընտրությունը ձեւակերպվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ (տես՝ Հավելված №3):

Եթե սահմանված ժամկետում չի ընտրվում ընտրական հանձնաժողովի նախագահ/նախագահի տեղակալ, նշված պաշտոնի անձի պարտականությունը մինչեւ նրա ընտրությունը կատարում է հանձնաժողովի այն անդամը, ով քվեարկությունում բոլորից շատ ձայն կստանա, իսկ ձայների հավասարության դեպքում՝ նրանցից վիճակահանությամբ որոշված անձը:

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի ընտրության կարգը

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 25.15-19)*

Հանձնաժողովի քարտուղար ընտրվում է կուսակցությունների կողմից նշանակված անդամներից (բացի Միացյալ Ազգային շարժման կողմից նշանակված անդամից):

Հանձնաժողովի քարտուղարի թեկնածու առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի առնվազն 2 անդամ (բացի Միացյալ Ազգային շարժման կողմից նշանակված անդամից):

Անվանված թեկնածուն կընտրվի անվանական քվեարկությամբ, կուսակցությունների կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կողմից ((բացի Միացյալ Ազգային շարժման կողմից նշանակված անդամից), նիստին ներկա գտնվողների մեծամասնությամբ:

Եթե կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները չեն կարողանա ընտրել հանձնաժողովի քարտուղարին, նրան առաջադրված թեկնածուներից ընտրում է հանձնաժողովը լրիվ կազմի մեծամասնությամբ (սակայն 7 անդամից ոչ պակաս):

Եթե այս դեպքում էլ չի ընտրվի քարտուղար, նրա պարտականությունը մինչեւ հանձնաժողովի քարտուղարի ընտրությունը, կատարում է հանձնաժողովի այն անդամը, ով քվեարկության ժամանակ բոլորից շատ ձայն ստացավ, իսկ ձայների հավասարության դեպքում՝ նրանցից վիճակահանությամբ որոշված անձը:

Եթե կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամները չեն անվանի հանձնաժողովի քարտուղարի թեկնածություն, այս դեպքում հանձնաժողովի քարտուղարի թեկնածու անվանելու իրավունք ունի հանձնաժողովի ցանկացած 2 անդամ: Հանձնաժողովի քարտուղար կընտրվի հանձնաժողովի կազմից, հանձնաժողովի լրիվ կազմի մեծամասնությամբ (սակայն ոչպակաս 7 անդամի):

**Ուշադրություն!**

- Անվանված թեկնածուն իրավունք ունի մասնակցելու քվեարկությանը եւ ձայն տալ սեփական թեկնածության օգտին:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի ընտրությունը ձեւակերպվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությամբ (տես՝ Հավելված N3):

## Գլուխ II. Տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքի կարգը

### Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց լիազորությունները

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 27.1).*

- Հրավիրում եւ ղեկավարում է հանձնաժողովի նիստը,
- Ստանում եւ բաժանում է հանձնաժողով մտած փաստաթղթերը եւ թղթակցությունը,
- Անձամբ պատասխանատու է ընտրական փաստաթղթերը եւ գույքը պահպանելու/հանձնելու համար,
- Առաջադրանք է տալիս նախագահի տեղակալին, հանձնաժողովի քարտուղարին եւ հանձնաժողովի այլ անդամներին,
- Քվեարկության օրը կազմակերպում է վիճակահանությամբ հանձնաժողովի անդամների միջեւ գործառույթների բաշխումը,
- Պատասխանատու է ընտրական տեղամասի շենքում եւ մերձակա տարածքի վրա կարգապահության պաշտպանության համար,
- Պարտավոր է քվեարկության շենք չթողնել առանց համապատասխան կրծքանշանների անձանց,
- Քվեարկության արդյունքները ամփոփելուն պես վերադաս տարածքային ընտրական հանձնաժողովին է փոխանցում բոլոր ընտրական փաստաթղթերը:

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ** *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 27.2).*

- Կատարում է հանձնաժողովի նախագահի պարտականությունը, եթե հանձնաժողովը չունի նախագահ կամ նա չի կարող կատարել իր պարտականությունները,
- Հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ իրականացնում է հանձնաժողովի նախագահի առանձին լիազորություններ:

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղար** *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 27.3)*

- Պատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգի եւ կարգադրությունների նախագծերը,
- Պատասխանատու է հանրային տեղեկատվություն տալու համար,
- Կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, այդ թվում, քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները:

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերի նախապատրաստում

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստ հրավիրում է հանձնաժողովի նախագահը իր նախաձեռնությամբ կամ իր տեղակալի պահանջով:



Նիստ հրավիրելու մասին որոշում ընդունելուն պես, հանձնաժողովի քարտուղարը տեղամասային ընտրական հանձնաժողովում աչքի ընկնող տեղում փակցնում է հայտարարություն նիստ հրավիրելու մասին, նշելով նիստի ամսաթիվը, ճիշտ ժամանակը եւ ենթադրական օրակարգը *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 9.1-9.2):*

Նախագահի տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի քարտուղարը, անձամբ պատասխանատու է նիստի ամսաթիվը եւ այն սկսելու ճիշտ ժամանակը տեղեկացնելու հանձնաժողովի բոլոր անդամներին *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի ռեգլամենտ – Հոդված 9.3):*

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը բաց է: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք *ունեն (Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.15).*

- ԿԸՀ-ի եւ տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները,
- ԿԸՀ-ի եւ տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները,
- ԿԸՀ-ի աշխատակազմի աշխատակիցները,
- Համապատասխան ընտրական հանձնաժողովում լիազորագրված մեդիայի ներկայացուցիչները,
- Ընտրական սուբյեկտների մեկական ներկայացուցիչ,
- Տեղական դիտորդական կազմակերպությունների մեկական դիտորդ,

- Միջազգային դիտորդական կազմակերպությունների մեկական դիտորդ (թարգմանչի հետ):

Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավունք ունի կարգապահությունը խախտելու եւ հանձնաժողովի աշխատանքը խանգարելու դեպքում, կարգ ու կանոնը խախտող անձին վտարել նիստի դահլիճից, ինչը նշվում է նիստի արձանագրության մեջ ունեն *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.15):*

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի ընթացքը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը ղեկավարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ նախագահի տեղակալը *(տեղամասային ընտրական հանձնաժողովի ռեգլամենտ – Հոդված 9.7):* Նիստը իրավասու է, եթե դրան ներկա է հանձնաժողովի լրիվ կազմի մեծամասնությունը՝ 7 անդամից ոչ պակաս) *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.3):*

Հանձնաժողովի անդամները նիստին ներկայությունը հաստատում են ներկայության թերթին ստորագրությամբ *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 9.5):*

Հանձնաժողովի նիստի օրակարգը պատրաստում է հանձնաժողովի քարտուղարը: Քննարկվելիք հարցը քվեարկվում է արված առաջարկությունների հերթականության համաձայն *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 9.4; Հոդված 10.2):*

Հանձնաժողովի բոլոր անդամները օրակարգով նախատեսված հարցերի կապակցությամբ իրավունք ունեն խոսքով ելույթ ունենալ 2 րոպեի ընթացքում: Հանձնաժողովի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք նիստում խոսքով ելույթ են ունենում նիստի նախագահի համաձայնությամբ, հանձնաժողովի անդամներից հետո *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 10.6; Հոդված 9.11):*

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի արձանագրություն

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստերին հարցերի քննարկման եւ որոշումների ընդունման ընթացքը ամրագրվում է նիստի արձանագրությունում: Հանձնաժողովի քարտուղարը նիստի արձանագրությունը ձեւակերպում է նիստից հետո մեկ օրվա ժամկետում *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.8):* Նիստի արձանագրությունը ստորագրում են նիստի նախագահը եւ հանձնաժողովի քարտուղարը *(Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ - Հոդված 9.8):*

Արձանագրությունը համարակալվում եւ գրանցվում է Գրանցամատյանի «Տրված փաստաթուղթ« բաժնում:

**Ուշադրություն.**

Հանձնաժողովի անդամը, ով չի համաձայնում հանձնաժողովի որոշմանը, իրավունք ունի արտահայտել տարբերվող կարծիք, որը մտցվում է նիստի արձանագրության մեջ: Տարբերվող կարծիք ունեցող հանձնաժողովի անդամը պարտավոր է հարգել եւ ենթարկվել հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներին: Նա իրավունք չունի իր արարքով խանգարել հանձնաժողովի որոշումների գործադրմանը *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.9):*

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության կարգը

(Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 11)

Տեղամասային ընտրական հանձնաժողովը վարում է է Գրանցամատյան, որի վարման համար պատասխանատու է հանձնաժողովի քարտուղարը:

Գրանցամատյանը կազմված է երկու մասից.

### I. Մուտքագրված փաստաթղթեր

Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է փաստաթղթի/դիմումի մուտքը գրանցել «մուտքագրված փաստաթուղթ» մասում:

**Ուշադրություն!**

Փաստաթուղթ/դիմում ստանալուց եւ մատյանում պատշաճ գրանցելուց հետո հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է տալ տեղեկանք, որտեղ նշվում է փաստաթղթի/դիմումի ընդունման ամսաթիվը եւ ճիշտ ժամանակը, ինչպես նաեւ մատյանում դրան տրված գրանցման համարը: Նշված տեղեկանքը հանձնաժողովի քարտուղարը պետք է վավերացնի ստորագրությամբ (Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 11.5):

### II. Տրված փաստաթղթեր

Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է փաստաթուղթ տալը գրանցել տրված փաստաթղթերի մասում:

Գրանցամատյանը փակվում է ամեն օրվա ժամը 18-ին: Մատյանի երկու մասերում, վերջին գրանցումից հետո, կատարվում է նշում «Մատյանը փակ է», նշվում է ամսաթիվը եւ ճիշտ ժամանակը: Նշված գրանցումը հանձնաժողովի քարտուղարը հաստատում է ստորագրությամբ (Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ - Հոդված 11.15):

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավական ակտերը

*(Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 6)*

Տեղամասային ընտրական հանձնաժողովի իրավական ակտեր են.

- Հանձնաժողովի կարգադրությունը,
- Հանձնաժողովի նախագահի կարգադրությունը,
- Հանձնաժողովի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումը ձեւակերպվում է կարգադրությամբ:

**Տեղամասային ընտրական հանձնաժողովը կարգադրություն կարող է արձակել.**

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրության եւ պաշտոնից վաղաժամկետ ազատման *մասին (Ընտրական օրենսգիրք - Հոդված 25; Հոդված 29.3),*
- Քվեարկության շենքի ժամանակավոր փակման/քվեարկության ընդհատման/դադարեցման մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունը հաստատելու կամ չեղյալ հայտարարելու մասին *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 60.4),*
- Քվեարկության դադարեցման եւ ընտրական տեղամասի փակման մասին *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 60.4),*
- Քվեատուփի բացման ժամանակ, ընտրական փաստաթղթերը կնիքելու եւ տարածքային ընտրական հանձնաժողովում ներկայացնելու մասին, եթե հանձնաժողովը գտնում է, որ խախտվել են ընտրական օրենսգրքի պահանջները *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 68):*

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունն արձակվում է.**

- Քվեարկության շենքի ժամանակավոր փակման/քվեարկության ընդհատման/դադարեցման մասին *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 60.3),*
- Քվեարկության շենքի բացման/քվեարկության շարունակման մասին *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 60.3),*
- Նախագահի տեղակալին հանձնաժողովի նախագահի առանձին լիազորություններ շնորհելու մասին *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 27.2.Բ)*

**Ուշադրություն!**

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունը պետք է ձեւակերպվի այն ընդունելուց անմիջապես հետո, որը երկրորդ օրվանից ոչ ուշ պետք է փակցվի ընտրական տեղամասում աչքի ընկնող տեղում: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությունը ստորագրում է հանձնաժողովի նախագահը *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 30.4, Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 6.4):*

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստում կարգադրություն ընդունելու կարգը

Տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրությունների նախագիծը պատրաստում է հանձնաժողովի քարտուղարը (Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 9.4): Հանձնաժողովի կարգադրությունը ընդունված կհամարվի, եթե դրան աջակցի նիստին ներկա գտնվողների մեծամասնությունը, սակայն ոչ պակաս հանձնաժողովի լրիվ կազմի մեկ երրորդից (5 անդամից ոչ պակաս), ձայները հավասար բաժանվելու դեպքում որոշիչ է համարվում նիստի նախագահի ձայնը *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.4-5):*

Հանձնաժողովի կարգադրությունը ստորագրում են նիստի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը: Հանձնաժողովի կարգադրությունը երկրորդ օրն ներթ փակցվելու է ընտրական տեղամասում *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 30.4;Հոդված 26.3; Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 6.4):*

## Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդգրկվածությունը եւ սահմանափակումները նախընտրական քարոզչությանը /քարոզարշավին

Տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության շենքում աչքի ընկնող տեղում փակցնում է թեկնածուների ցուցակները եւ կուսակցական ցուցակները *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 58.4.դ, Տեղամասային ընտրական հանձնաժողովի Ռեգլամենտ – Հոդված 8.2.բ-գ):*

**Ուշադրություն!**

Ընտրական հանձնաժողովի անդամին արգելվում է մասնակցել ընտրական քարոզչությանը (Ընտրական օրենսգիրք - Հոդված 45.4.ա):

## Գլուխ I. Ընտրացուցակներ

### Ընտրացուցակների ճշգրտումն ապահովող հանձնաժողով

2012 թվականի խորհրդարանային ընտրությունների համար Վրաստանի ողջ տարածքով, ընտրացուցակների ճշգրտումն ապահովելու նպատակով, 2011 թվականի նոյեմբերի 15-ին ստեղծվեց ընտրողների ցուցակների ճշգրտումն ապահովող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով), որի մեջ հավասար ներկայացուցչության սկզբունքով մտնում են իշխանության, ընդդիմադիր քաղաքական միավորումների և ոչկառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ընդամենը 21 անդամ (Ընտրական օրենսգիրք - Հոդված 184, Ընտրողների ցուցակների ճշգրտումն ապահովող հանձնաժողովի Կանոնադրություն):

Հանձնաժողովի կառուցվածքային միավորումներ են հանձնաժողովի աշխատակազմը եւ 11 տարածաշրջանային ներկայացուցչություն.

- Թբիլիսիի տարածաշրջանային ներկայացուցչություն,
- Աջարիայի Ինքնավար Հանրապետության տարածաշրջանային ներկայացուցչություն,
- Գուրիայի տարածաշրջանային ներկայացուցչություն ,
- Իմերեթիի տարածաշրջանային ներկայացուցչություն ,
- Կախեթի տարածաշրջանային ներկայացուցչություն,
- Մցխեթա-Մթիանեթի տարածաշրջանային ներկայացուցչություն,
- Ռաճա-Լեչխումի տարածաշրջանային ներկայացուցչություն,
- Սամեգրելո-Զեմո Սվանեթի տարածաշրջանային ներկայացուցչություն,
- Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանային ներկայացուցչություն,
- Քվեմո Քարթլիի տարածաշրջանային ներկայացուցչություն,
- Շիդա Քարթլիի տարածաշրջանային ներկայացուցչություն:

Ընտրացուցակների ճշգրտումն ապահովող հանձնաժողովը ընտրողների ցուցակները ճշգրտում է և ԿԸՀ-ին կփոխանցի մինչեւ 2012 թվականի օգոստոսի 1-ը: Դա ընտրողների միասնական ցուցակն է 2012 թվականի խորհրդարանային ընտրությունների համար *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 184.10):*

**Ուշադրություն!**

Ընտրացուցակների ճշգրտման ապահովման հանձնաժողովի անդամները և տարածաշրջանային ներկայացուցչությունների պետերը իրավասու են, ոչ ուշ, քան մինչև ընտրությունները 14-րդ օրից (սեպտեմբերի 17) հետո , հանձնաժողովի որոշման հիման վրա, ընտրական տեղամասերում իրականացնեն ընտրացուցակների մոնիթորինգ ցանկացած ժամանակ, այդ թվում քվեարկության օրը (հոկտեմբերի 1):

## Համընդհանուր ընտրացուցակները եւ դրանց հրապարակման կարգը

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 31)*

Տեղամասային ընտրական հանձնաժողովը առաջին հավաքման օրից ոչ ուշ (մինչև քվեարկության օրը 34-րդ օրից ոչ ուշ՝ օգոստոսի 28) փոխանցում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի եւ հանձնաժողովի քարտուղարի կողմից ստորագրված համընդհանուր ընտրացուցակը, որը հատկացված է հանրային տեղեկատվության համար (պատի ցուցակ):

Պատի ցուցակը անհապաղ պետք է փակցվի տեղամասային ընտրական հանձնաժողովի շենքում աչքի ընկնող տեղում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովին մինչև քվեարկության օրը երկրորդ օրվանից ոչ ուշ սեպտեմբերի 29) փոխանցվում են ճշգրտված ցուցակների վերջնական տարբերակները.

- Ընտրական հանձնաժողովին հատկացված տարբերակ (սեղանի ցուցակ),
- Հանրային տեղեկատվությանը հատկացված տարբերակ (պատի ցուցակ):

**Ուշադրություն!**

- Պատի ցուցակների նախնական տարբերակը պետք է հանվի եւ նույն տեղում փակցվի ճշգրտված տարբերակը:
- Չի թույլատրվում սեղանի ցուցակը եւ նրա պատճեն տալ հանրային տեղեկատվության տեսքով:

## Համընդհանուր ընտրացուցակի տվյալների վերստուգում

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 26.2.Բ)*

Տեղամասային ընտրական հանձնաժողովը.

- Ստուգում է համընդհանուր ընտրացուցակի ճշտությունը,
- Սխալների կամ անճշտությունների հայտնաբերման դեպքում, հաջորդ օրից ոչ ուշ, սակայն մինչև ընտրությունները 14-րդ օրից ոչ ուշ (սեպտեմբերի 17), ցուցակում փոփոխություն մտցնելու առաջարկությամբ դիմում է տարածքային ընտրական հանձնաժողովին:

- Ցուցակների կապակցությամբ ստացված դիմումները անհապաղ փոխանցում է տարածքային ընտրական հանձնաժողովին:

## Ընտրողների հատուկ ցուցակ

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 32, Հոդված 34.2)*

Ընտրողների հատուկ ցուցակը կազմում եւ կարգադրությամբ հաստատում է տարածքային ընտրական հանձնաժողովը և մինչև քվեարկության օրը, 3-րդ օրից ոչ ուշ (սեպտեմբերի 28) կհանձնի տեղամասային ընտրական հանձնաժողովին:

Եթե քվեարկության օրը ընտրություններին մասնակցելու պահանջով տեղամասային ընտրական հանձնաժողովին դիմում է ընտրող, ով մինչև ընտրությունների օրը, 14-րդ օրից (սեպտեմբերի 17) ոչ ուշ, չի հասցրել դիմել Համընդհանուր ընտրացուցակների ճշգրտումն ապահովող հանձնաժողովին ցուցակում գրանցվելու պահանջով, **(ժամանեց արտասահմանից, դուրս գրվեց հիվանդանոցից, ազատվեց ազատազրկման հիմնարկությունից),** համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում (տեղեկանք սահմանը հատելու մասին (գրանցում անձնագրում), տեղեկանք բուժական հիմնարկությունից դուրս գրվելու մասին , կամ տեղեկանք ազատազրկման հիմնարկությունից ազատագվելու մասին), նրան հատուկ ցուցակում հաշվարկում է տեղամասային ընտրական հանձնաժողովը եւ ընտրացուցակին կցում է ներկայացված փաստաթղթերի լուսանկարային պատճենները (Ընտրական օրենսգիրք - Հոդված 31.12):

## Շրջիկ քվետուփի ձևավորման կարգը

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 33, Հոդված 34.2.ե)*

Շրջիկ քվետուփի ցուցակի ձևավորման համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովը: Շրջիկ քվետուփի ցուցակը կազմվում է համընդհանուր եւ հատուկ ցուցակների հիման վրա:

- Ընտրողին շրջիկ քվետուփի ցուցակում մտցնում են, եթե.
- Սահմանափակ կարողության կամ/և առողջական վիճակի պատճառով չի կարող գնալ քվեարկության շենք (այդպիսի ընտրողների թվաքանակը չպետք է գերազանցի ընտրական տեղամասի համընդհանուր ցուցակում գոյություն ունեցող ընտրողների 3 տոկոսին: Նշված քանակության լրանալուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է յուրաքանչյուր նոր մտած դիմումի մասին անհապաղ տեղեկացնել տարածքային ընտրական հանձնաժողովին և սպասել համապատասխան ցուցմունքներին),
- Գտնվում է ընտրական տեղամասի տարածքում, բայց դժվար հասանելի տեղում (նման դեպքում խորհուրդ է տրվում խորհրդատվություն անցնել տարածքային ընտրական հանձնաժողովի մոտ):

**Ուշադրություն!**

- Ընտրողը տեղամասային ընտրական հանձնաժողովին գրավոր կամ հեռախոսային հաղորդմամբ, շրջիկ քվեատուփի միջոցով ձայն տալու պահանջով, դիմում է մինչեւ քվեարկության օրը գոնե 2- օրով շուտ (սեպտեմբերի 28): Հանձնաժողովի քարտուղարը Գրանցամատյանում նշում է դիմումի/հաղորդագրությամն մուտքի ճիշտ ժամանակը/հեռախոսահամարը:
- Հանձնաժողովի քարտուղարը ընտրողին շրջիկ քվեատուփի ցուցակում մտցնում է այն դեպքում, եթե նա մտցված է Համընդհանուր ընտրացուցակում եւ նրա փաստացի գտնվելու վայրը պատկանում է այն ընտրական տեղամասի տարածքին, որտեղ նա հաշվարկված է:

- Գտնվում է կալանքում,
- Բուժվելու համար պառկած է հիվանդանոցում կամ այլ ստացիոնարային բուժական հիմնարկությունում և այնտեղ չի բացվում ընտրական տեղամաս (քվեարկության օրը ստացիոնարային/բուժական հիմնարկությունում գտնվող ընտրողի մասին լրատվություն տարածքային ընտրական հանձնաժողովը կհաղորդի տեղամասային ընտրական հանձնաժողովին մինչև քվեարկության օրը՝ 2 օրից ոչ ուշ),
- Զինծառայող է, ծառայում է պետական սահմանին տեղաբաշխված զինվորական զորամասում, որը ընտրական տեղամասից հեռու է գտնվում և այնտեղ չի բացվում ընտրական տեղամաս:

Շրջիկ քվեատուփի ցուցակում կմտցվեն ընտրողի նույն տվյալները, ինչը կա համընդհանուր ընտրացուցակում եւ լրացուցիչ կնշվի նրա հերթական համարը ընդհանուր կամ հատուկ ցուցակում:

Շրջիկ քվեատուփի ցուցակում ընտրողին մտցնելու դեպքում ընդհանուր եւ հատուկ ցուցակների երկայնքով «Փաստացի վիճակ» սյունակում պետք է կատարվի նշում՝ «Շրջիկ քվեատուփ»:

Շրջիկ քվեատուփի ցուցակը այն կազմելուն պես աչքի ընկնող տեղում փակցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի եւ քվեարկության շենքերում:

**Ուշադրություն!**

- Շրջիկ քվեատուփի ցուցակում մտցվելիք ընտրողների մասին տեղեկատվությունը անհապաղ պետք է փակցվի ընտրական տեղամասում աչքի ընկնող տեղում:
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչները և դիտորդներն իրավունք ունեն, վերստուգել շրջիկ քվեատուփի միջոցով ձայն տալու պահանջի հիմնարարությունը եւ մինչև ընտրությունների օրը, ցանկացած ժամանակ, տեղամասային ընտրական հանձնաժողովի առջև բարձրացնեն այս անձանց շրջիկ քվեատուփի ցուցակում մտցնելու նպատակահարմարության հարցը: Նշված հարցը կապակցությամբ որոշումը ընդունում է տեղամասային ընտրական հանձնաժողովը:

## Հատուկ ցուցակում եւ շրջիկ քվեատուփի ցուցակում մտցված ընտրողի ընտրական իրավունքը

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 32.5,Հոդված 66.8)*

**Հատուկ ցուցակում գրանցված ընտրողը մասնակցում է.**

- Ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրական համակարգով անցկացված ընտրություններին, եթե նա գտնվելու վայրը փոխի միևնույն ընտրատարածքի տարածությունում,
- Համամասնական ընտրական համակարգով անցկացված Վրաստանի խորհրդարանի ընտրություններին, եթե նա ձայն է տալիս այլ ընտրատարածքի տարածությունում:

**Շրջիկ քվեատուփի ցուցակում մտցված ընտրողը մասնակցում է** համամասնական եւ մեծամասնական ընտրական համակարգերով անցկացված ընտրություններին, եթե ընտրողի գրանցման վայրը եւ ընտրողի փաստացի գտնվելու վայրը պատկանում են միևնույն ընտրատարածքին: Հակառակ դեպքում ընտրողին տրվում է միայն համամասնական ընտրական համակարգով անցկացվող ընտրություններին մասնակցելու իրավունք:

## Ընտրողի կտրոն

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 35):*

Տեղամասային ընտրական հանձնաժողովը իրավասու է ընտրական տեղամասի տարածքում գրանցված և Համընդհանուր ընտրացուցակում մտցված բոլոր ընտրողներին սեպտեմբերի 28-ից ոչ ուշ տալ ընտրողի կտրոն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովից ստանում է տպագրված ընտրողների կտրոններ, որտեղ նշված է.

- Քվեարկության ամսաթիվը եւ ժամանակը,

- Քվեարկության շենքի հասցեն, հարկի եւ սենյակի համարները,
- Ընտրողի համարը ընտրացուցակում,
- Ընտրողի կողմից առողջական վիճակի կապակցությամբ կամ այլ պատճառով քվեարկությանը շրջիկ քվեատուփի միիջոցով մասնակցելու վերաբերյալ դիմումի կամ հայտարարություն անելու կարգը, տեղամասային ընտրական հանձնաժողովի հեռախոսի (ֆաքսի) համարները և այլ ռեկվիզիտներ,
- Ընտրական տեղամասի համարը,
- Ընտրողի ազգանունը, անունը, ծննդյան ամսաթիվը ( թիվը, ամիսը, տարին),
- Ընտրողի հաշվարկի վայրը:

Ընտրողի այն կտրոնները, որոնք չեն բաժանվել ընտրողներին ըստ նշված հասցեների, հանձնաժողովի անդամները պետք է վերադարձնեն հանձնաժողովի քարտուղարին:.

**Ուշադրություն!**

Ընտրողի կտրոն չստանալը չի հանդիսանում քվեարկությանը մասնակցելու իրավունքը սահմանափակելու հիմք:

## Գլուխ II. Ընտրական փաստաթղթերի ստացում եւ քվեարկության շենքի սարքավորում

### Տարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի և ընտրական գույքի ստացում

Տեղամասային ընտրական հանձնաժողովը, քվեարկության նախապատրաստության և անցկացման նպատակով, տարածքային ընտրական հանձնաժողովից ստանում է. .

#### Ընտրական փաստաթղթերը

- Ընտրողների համընդհանուր ցուցակի վերջնական տարբերակը,
- Ընտրողների կտրոնները,
- Շրջիկ քվեատուփի ցուցակի բլանկներ,
- Ընտրական քվեաթերթիկների բլոկնոտներ,
- Հատուկ ծրարներ,
- Քվեարկության օրվա Գրառումների գիրք,
- Ստուգողական թերթեր,

- Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների և «Ուղղումների արձանագրության»ձևերը,
- Ցուցադրական արձանագրություններ:

Ընտրական գույք,

- Հիմնական եւ շրջիկ թափանցիկ քվեատուփեր,
- քվեատուփերի զմուռս,
- Քվեախցիկներ ,
- Դրոշմակնքման հեղուկ և դրոշմակնքումը ստուգող հատուկ սարք (ուլտրամանուշակագույն լապտեր),
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիք,
- Գրանցողների կնիքներ,
- Պատճենահան մեքենա,
- թանաքային բարձիկներ:

Այլ ընտրական նյութ

- Ընտրական սուբյեկտների ցուցակ,
- Ընտրական քվեաթերթիկը լրացնելու հրահանգ,
- Քաղվածք Օրենքից. թե ո՞ր դեպքում է քվեաթերթիկը անվավեր,
- Ընտրական փաստաթղթերը փաթեթավորելու ծրարներ:

**Ուշադրություն!**

Տարածքային ընտրական հանձնաժողովը ընտրական քվեաթերթիկները եւ հատուկ ծրարները մինչև քվեարկության սկսվելը, 12 ժամից ոչ ուշ, փոխանցում է տեղամասային ընտրական հանձնաժողովներին (Ընտրական օրենսգիրք - Հոդված 63.9):

## Ընտրական փաստաթղթերի և գույքի ընդունման-հանձնման ակտ



Հանձնաժողովի նախագահը, կամ նախագահի կարգադրության հիմման վրա՝ նախագահի տեղակալը, հանդիսանում է տարածքային ընտրական հանձնաժողովից ընտրական փաստաթղթերի ընդունման համար պատասխանատու անձ, իսկ ընտրական փաստաթղթերի պահպանության և ըստ նշանակության հանձնման համար պատասխանատու է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 27.1.Դ, Հոդված 63.6):*

Ընդունման-հանձնման ակտը ստորագրում են ընտրական փաստաթղթեր տվող և ընդունող անձինք *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 63.10):* Ընդունման-հանձնման ակտը տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը գրանցում է Գրանցամատյանում «Մուտքագրված փաստաթղթեր» բաժնում:

## Քվեարկության շենքի սարքավորում



Քվեարկության ընթացակարգեր անցկացնելու համար, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են օրենքով սահմանված կարգերի պահպանմամբ, մինչև քվեարկությունը մեկ օրից ոչ ուշ, սարքավորել քվեարկության շենքը: Տեղամասային ընտրական հանձնաժողովը պետք է սարքավորի. *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 58.4.ա-գ).*

- Ընտրողների հաշվարկի սեղանները (մեկ հաշվարկման սեղան յուրաքանչյուր 300 ընտրողի հաշվով (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.2.ե.գ),
- Գաղտնի քվեախցիկները. մեկ քվեախցիկ յուրաքանչյուր 500 ընտրողի հաշվով: Քվեախցի մեկ կողմը կիսով բաց պետք է լինի, իսկ վերին կեսը՝ վարագույրով ծածկված: Գաղտնի քվեախցիկում պետք է լինի գրիչ, քաղվածք օրենքից, թե որ դեպքում է քվեաթերթիկը անվավեր,
- Հատուկ ծրարների սեղան (պետք է դրված լինի քվեատուփին մոտ),
- Դասավորված քվեատուփեր (չկնիքված):

Քվեարկության շենքում թափանցիկ քվեատուփը պետք է տեղադրված լինի աչքի ընկնող տեղում այնպես, որ ընտրողը առանց խոչընդոտումների մոտենա դրան և ծրարը քվեատուփի մեջ գցելուց հետո անմիջապես թողնի ընտրական տեղամասը:



Տեղամասային ընտրական հանձնաժողովը, սայլակից օգտվող սահմանափակ կարողության ընտրողների կողմից մինչև քվեարկության օրը 25-րդ օրից ոչ ուշ դիմելու դեպքում, մինչև քվեարկության օրը 20-րդ օրից ոչ ուշ դիմում է պետական իշխանությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին, որպեսզի ապահովեն քվեարկության տեղանքի ժամանակավոր, պարզ հարմարվածությունը *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 58.3):*

**Ընտրական տեղամասում աչքի ընկնող տեղում փակցված պետք է լինեն**
*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 58.4.Դ; 58.5).*

- Ընտրացուցակները,
- Ընտրությանը մասնակցող թեկնածուների ցուցակը (կուսակցական ցուցակներ, մեծամասնական թեկնածուների ցուցակներ),
- ԿԸՀ-ի կողմից սահմանված ընտրական քվեաթերթիկների լրացման կարգը,
- Քաղվածք օրենքից, թե որ դեպքում է քվեաթերթիկը անվավեր,
- Քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունները:

# Գլուխ I. Ընտրական տեղամասի բացում և մինչև քվեարկությունը անցկացվելիք ընթացակարգեր

## Ընտրական տեղամասի բացում

Ընտրական տեղամասը բացվում է քվեարկության օրվա ժամ 7-ին:

**Ուշադրություն!**

Եթե այդ ժամանակի համար հանձնաժողովի անդամների թիվը յոթից պակաս հայտնվի, նշված տեղեկատվությունը անհապաղ հաղորդվում է տարածքային ընտրական հանձնաժողովին, որն անմիջապես ընդունում է համապատասխան որոշում:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները պարտավոր են քվեարկության օրվա ընթացքում կրել նրանց հատկացված հատուկ համազգեստ: Նշված պահանջը չկատարելը վերադաս ընտրական հանձնաժողովի կողմից կքննարկվի որպես կարգապահության խախտում և կներկայացնի կարգապահական պատասխանատվություն ստանձնելու հիմք:

## Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.16; Հոդված 39.3,6; Հոդված 42.5; Հոդված 44.5)*

- Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեն.
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները,
- Վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները/ներկայացուցիչները,
- Ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները (միևնույն ընտրական սուբյեկտի 1 ներկայացուցչից ոչ ավելի),
- Գրանցված տեղական դիտորդական կազմակերպության դիտորդները (միևնույն տեղական դիտորդական կազմակերպության 1 դիտորդից ոչ ավելի),
- Գրանցված միջազգային կազմակերպության դիտորդները (միևնույն միջազգային կազմակերպության 2 դիտորդից ոչ ավելի (լրացուցիչ հնարավոր է ուղեկցի թարգմանիչը),
- Մեդիայի լիազորագրված ներկայացուցիչները (մամուլի և զանգվածային լրատվական միևնույն միջոցի 3 ներկայացուցչից ոչ ավելի):

**Ուշադրություն!**

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձինք անպայման պետք է կրեն իրենց ով լինելը և կարգավիճակը հաստատող կրծքանշան(Ընտրական օրենսգիրք - Հոդված 8.17):

## Դիտորդի, ընտրական սուբյեկտի և զանգվածային լրատվական միջոցի ներկայացուցչի իրավական վիճակը

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 41)*

Դիտորդը և ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն իրավունք ունեն.

- Քվեարկության օրվա ցանկացած ժամանակ գտնվել քվեարկության շենքում, անսահմանափակ տեղաշարժվել ընտրական տեղամասի տարածքով և ազատ, առանց խոչընդոտումների դիտարկել քվեարկության գործընթացի բոլոր փուլերը ցանկացած տեղից,
- Քվեարկության օրվա ցանկացած ժամանակ փոխարինել իրեն ներկայացնող կազմակերպության այլ գրանցված ներկայացուցչին:

Դիտորդը, ընտրական սուբյեկտի և զանգվածային լրատվական միջոցի ներկայացուցիչն իրավունք չունեն.

- Միջամտել ընտրական հանձնաժողովի գործառույթներին եւ գործունեությանը,
- Ազդեցություն գործել ընտրողների կամքի ազատ դրսևորման վրա,
- Քարոզչություն անել ընտրողին որևէ ընտրական սուբյեկտի օգտին կամ հակառակ,
- Կրել որևէ ընտրական սուբյեկտի խորհրդանշանը եւ նշանը: .

**Ուշադրություն!**

Քվեարկության օրը քվեարկության շենքում արգելված է նախընտրական քարոզչությունը:

## Ընտրական տեղամասը բացելուց մինչև քվեարկության սկսվելը անցկացվելիք ընթացակարգեր

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 61- 62)*

Ընտրական տեղամասը բացելուց մինչև քվեարկության սկսվելը ընթացակարգերը անց են կացվում հետևյալ հաջորդականությամբ.



**I** Ընտրական տեղամասը բացելուց անմիջապես հետո բացվում է քվեարկության օրվա Գրառումների գիրքը *(Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.2.ա)*:

Հանձնաժողովի նախագահը, ընտրական տեղամասը բացելուն պես, քվեարկության օրվա Գրառումների գիրքը փոխանցում է տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարին: Հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է, հանձնաժողովի նախագահի հետ միասին, գրանցել քվեարկության օրվա բոլոր ընտերական ընթացակարգերը և նշել դրանց իրականացման ժամանակը (Ընտրական օրենսգիրք - Հոդված 62.3):

Գրառումների գրքի առաջին և երկրորդ էջերին հանձնաժողովի քարտուղարը մտցնում է քվեարկության շենքում գտնվող հանձնաժողովի բոլոր անդամների անունը և ազգանունը (դրանց ներկայացնող սուբյեկտի մատնանշումով), քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց տվյալները (անուն, ազգանուն, ներկայացնող կազմակերպությունը կամ ընտրական սուբյեկտին) և նրանց ստորագրությամբ վկայագրում:

**II** Հանձնաժողովի նախագահը ստուգում է զոռաած փաթեթի ամբողջականությունը, որտեղ տեղավորված է տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը, բացում է զոռաած փաթեթը և կատարում է կնիքի առաջին հատվածախուցը, որի նմուշը արտացոլվում է քվեարկության օրվա Գրառումների գրքում (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.2.Բ):

**III** Հանձնաժողովի նախագահը գործառույթները բաշխելու համար անց է կացնում վիճակահանություն :

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների միջև բաշխվելիք գործառույթներն են.

- Ընտրողների հոսքը կարգավորող,
- Ընտրողներին գրանցող (առնվազն մեկ գրանցող յուրաքանչյուր 300 ընտրողի հաշվով),
- Քվեատուփը և հատուկ ծրարները հսկող,
- Շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի 2 անդամ:

**Ուշադրություն!**

Վիճակահանությանը չեն մասնակցում հանձնաժողովի նախագահը/տեղակալը/հանձնաժողովի քարտուղարը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, մինչև վիճակահանություն անցկացնելը, պետք է համեմատի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թվաքանակը և բաշխվելիք գործառույթների թվաքանակին:

Այն դեպքում, եթե վիճակահանություն անցկացնելու ժամանակ ներկա գտնվող հանձնաժողովի անդամների թվաքանակը հայտնվի բաշխվելիք գործառույթներից.

- **1-ով պակաս,** կրճատվում է ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամների թվաքանակը,

- **2-րդ պակաս,** հանձնաժողովի նախագահի տեղակալը կատարում է քվեարկության սենյակում ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթը,
- **3-րդ պակաս,** հանձնաժողովի նախագահը կատարում է քվեատուփը և հատուկ ծրարները հսկող հանձնաժողովի անդամի գործառույթը:

Առաջին հերթին, հանձնաժողովի նախագահը անց է կացնում վիճակահանություն կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի անդամներից շրջիկ քվեատուփը տանող 2 անդամին բացահայտելու համար (անհրաժեշտության դեպքում):

**Ուշադրություն!**

Վիճակահանությամբ բացահայտված անձինք չի կարելի, որ լինեն մեկ ընտրական սուբյեկտի կողմից ներկայացված հանձնաժողովի անդամներ (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.2.Դ):

**Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը.**

- Վերլուծում է, թե կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի քանի անդամ է մասնակցում վիճակահանության գործընթացին.
- Դրանց թվաքանակին համապատասխան պատրաստում է միևնույն ձևի և տեսակի թերթիկներ,
- 2 թերթիկների վրա, միևնույն գրչով գրում է գործառույթի անվանումը՝ «Շրջիկ քվեատուփը տանողներ»,
- Վիճակահանության թերթիկները վկայագրում է հատուկ կնիքով,
- Թերթիկները ծալում է այնպես, որ անհնար լինի տեքստը կարդալ և տեղադրում է սեղանի վրա,
- Վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ-մեկ վերցնում են վիճակահանության թերթիկները:

Ուշադրություն!

- Եթե կուսակցության կողմից նշանակված հանձնաժողովի անդամը հրաժարվում է վիճակահանությանը մասնակցելուց, վիճակահանություն անց է կացվում կուսակցությունների կողմից նշանակված հանձնաժողովի մնացած անդամների միջև:
- Եթե վիճակահանությանը մասնակցող կուսակցությունների կողմից նշանակված անդամների թվաքանակը չի գերազանցում երկուսին և նրանք չեն հանդիսանում միևնույն ընտրական սուբյեկտի մողմից նշանակված անդամներ, այդ դեպքում վիճակահանություն չի անցկացվում: Բաշխվելիք գործառույթը նրանց ինքնաբերաբար է տրվում (համաձայնության հիման վրա):
- Եթե կուսակցության կողմից նշանակված հանձնաժողովի անդամները հրաժարվում են վիճակահանությանը մասնակցել կամ վիճակահանությանը մասնակցող անդամների թվաքանակը բաշխվելիք գործառույթներից պակաս է, վիճակահանությանը մասնակցում են նաև հանձնաժողովի մյուս անդամները:
- Եթե կուսակցության կողմից նշանակված անձը հրաժարվում է վիճակահանության արդյունքում բաշխված գործառույթը կատարելուց, հանձնաժողովի նախագահը նրան փոխարինում է վիճակահանության արդյունքում առանց գործառույթի մնացած հանձնաժողովի ցանկացած անդամով (ցանկալի է՝ կուսակցության կողմից նշանակված անդամով) :

Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքը մտցնում է Գրառումների գրքի 3-րդ էջին:

Շրջիկ քվեատուփը տանող հանձնաժողովի անդամներին բացահայտելուց հետո, հանձնաժողովի նախագահը անց է կացնում վիճակահանություն այլ գործառույթներ բաշխելու համար:

### Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը՝



- Վերլուծում է, թե հանձնաժողովի քանի անդամ է մասնակցում վիճակահանության գործընթացին,
- Դրանց թվաքանակին համապատասխան պատրաստում է միևնույն ձևի և տեսակի թերթիկներ,
- Թերթիկների վրա, միևնույն գրչով գրում է գործառույթի անվանումը՝ «Հոսքը կարգավորող», «Գրանցող», «Քվեատուփը և հատուկ ծրարները հսկող»,
- Վիճակահանության թերթիկները վկայագրում է հանձնաժողովի հատուկ կնիքով,
- Թերթիկները ծալում է այնպես, որ անհնար լինի տեքստը կարդալ և տեղադրում է սեղանի վրա,
- Վիճակահանությանը մասնակցող հանձնաժողովի անդամները մեկ-մեկ վերցնում են վիճակահանության թերթիկները:

Հանձնաժողովի քարտուղարը վիճակահանության արդյունքները մտցնում է Գրառումների գրքի 3-րդ էջին:

Հանձնաժողովի անդամի վիճակահանությամբ սահմանված գործառույթը ժամանակավորապես փոխանցել հանձնաժողովի այլ անդամի կարելի է միայն հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ, ինչը հանձնաժողովի քարտուղարը նշում է քվեարկության օրվա Գրառումների գրքի 5-րդ էջի վրա *(Ընտրական օրենսգիրք - Հոդված - 61.2.Չ):*

Եթե հանձնաժողովի որևէ անդամ, հանձնաժողովում ներկայանում է վիճակահանության ընթացակարգերի ավարտումից հետո, նրան գործառույթ շնորհելու հարցը որոշում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, իսկ նրա աշխատավարձի հարցը՝ տարածքային ընտրական հանձնաժողովը (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.4):

**IV** Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտների ներկայացուցիչներից վիճակահանությամբ բացահայտում է 2 ներկայացուցչից ոչ ավելի, որոնք դիտարկելու են բողոքների գրանցման գործընթացը (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.5):

**Ուշադրություն!**

Վիճակահանությանը չեն մասնակցում հանձնաժողովի քարտուղարին առաջադրած կուսակցության, ինչպես նաև ընտրական դաշինքի, որտեղ այդպիսի կուսակցություն է, կողմից նշանակված ներկայացուցիչները (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.5):

**V** Հանձնաժողովի նախագահը հայտարարում է ընտրողների քանակությունը ըստ ցուցակների, ստացած ընտրական քվեաթերթիկների և հատուկ ծրարների քանակությունը (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.6.գ):



**VI** Հանձնաժողովի նախագահը ստուգում և անհատական համար ունեցող զմուռով զմռսում է հիմնական և շրջիկ քվեատուփերը (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.6 գ):



**VII** Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներին փոխանցում է նյութերը:

**Հանձնաժողովի նախագահը ընտրողներին գրանցողներին փոխանցում է.**

- Այբբենական կարգով բաշխված Համընդհանուր ընտրացուցակները, գրանցողներից մեկին նույնպես կփոխանցի ընտրողների հատուկ ցուցակը (նման գոյության դեպքում),
- Համամասնական և մեծամասնական ընտրական քվեաթերթիկների մեկական բլոկնոտ,



- Վիճակահանությամբ բացահայտված գրանցողի կնիքը, որի վրա մինչև փոխանցելը կատարում է առաջին հատվածախուցը (կնիքի նմուշը պատկերվում է Գրառումների գրքում(Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.8),
- Դրոշմակնքման հեղուկ:

**Ուշադրություն!**

Նախագահը յուրաքանչյուր գրանցման սեղանի մոտ պետք է փակցնի ընտրողների ազգանունների այբբենական հերթականությունը սեղանի վրա տեղաբաշխված ցուցակներին համապատասխան:



**Հանձնաժողովի նախագահը ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին փոխանցում է** դրոշմակնքումը ստուգելու ուլտրամանուշակագույն լապտեր:



**Հանձնաժողովի նախագահը քվեատուփը և հատուկ ծրարները հսկող հանձնաժողովի անդամին փոխանցում է** հիմնական քվեատուփը և հատուկ ծրարները:

**VIII** Լրացվում է ստուգողական թերթը (Ընտրական օրենսգիրք - Հոդված 61.10):

Մինչև քվեարկության սկսվելը հանձնաժողովի նախագահը և քարտուղարը լրացնում են ստուգողական թերթերը (բացի առաջին ընտրողի մասին տվյալներից): Տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա գտնվող անդամները ստորագրում են ստուգողական թերթը:

**Ուշադրություն!**

Հանձնաժողովի անդամներին նյութերը փոխանցելուց հետո անհապաղ, մինչև քվեարկության սկսվելը, պետք է լրացվի ստուգողական թերթը (մի սպասեք առաջին ընտրողին):

Առաջին ընտրողը գալով, անցնում է գրանցում, ստանում քվեաթերթիկ, որից հետո էլ հանձնաժողովի քարտուղարը ստուգողական թերթի մեջ է մտցնում առաջին ընտրողի տվյալները:

Հանձնաժողովի նախագահը ստուգողական թերթի մեկ օրինակը զցում է հիմնական քվեատուփի մեջ, երկրորդ օրինակը՝ շրջիկ քվեատուփի մեջ, իսկ երրորդ օրինակը պահում է՝ քվեատուփերում գոյություն ունեցող ստուգողական թերթերի հետ համեմատելու նպատակով:

Ստուգողական թերթի տվյալները մտցվում են քվեարկության օրվա Գրառումների գրքի 4-րդ էջում:

**Ուշադրություն!**

Առաջին ընտրողի գրանցում անցնելուց հետո, հանձնաժողովի նախագահը տարածքային ընտրական հանձնաժողովին տեղեկացնում է տուփ(եր)ի կնիքման, ստուգողական թերթ(եր)ը տուփ(եր)ում գցելու, հանձնաժողովի հատուկ կնիքի և գրանցողների կնիքների վրա առաջին հատվածախուց անելու և հատվածախուցի նմուշը քվեարկության օրվա Գրառումների գրքում արտացոլելու մասին:

## Գլուխ II. Քվեարկության գործընթաց

### Քվեարկության անցկացում

*(Ընտրական օրենսգիրք - Հոդված 64- 65)*

Քվեարկություն անց է կացվում քվեարկության օրվա (հոկտեմբերի 1) 08:00 ժամից մինչև 20:00 ժամը: Ձայն տալու ընթացակարգը անց է կացվում հետևյալ կարգի և հաջորդականության պահպանմամբ.



I Քվեարկության սենյակ մտնելիս ընտրողը հոսքը կարգավորողի մոտ անցնում է դրոշմակնքման ստուգման ընթացակարգ:

**Ընտրողների հոսքի կարգավորողը.**

- Կարգավորում է ընտրական տեղամաս մտած ընտրողների հոսքը,
- Խնդրում է ընտրողին ներկայացնել Վրաստանի քաղաքացու Անձնական վկայական/ID քարտ կամ Վրաստանի քաղաքացու Անձնագիր,

**Ուշադրություն!**

Վրաստանի Ընտրական Օրենսգրքի 185[1] Հոդվածով սահմանված կարգով ընտրություններին ձայն տալու իրավունք ունի ընտրացուցակում գրանցված Եվրամիության անդամ պետության քաղաքացին, ով ծնվել և վերջին 5 տարվա ընթացքում մշտապես բնակվում է Վրաստանում: Նման անձը Ընտրական տեղամաս ներկայանալիս Վրաստանի քաղաքացու Անձնագրի և Անձնական վկայականի փոխարեն ներկայացնում է Եվրամիության անդամ պետության Անձնագիրը:

- Ուլտրամանուշակագույն լապտերով ստուգում է, նկատվու՞մ է, թե ոչ ընտրողի մոտ դրոշմակնքում,
- Ստուգում է, թե քանի ընտրող է կանգնած ընտրողներին հատկացված գրանցման սեղանի մոտ: Եթե Գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող է կանգնած, ժամանակավորապես ձգձգում է քվեարկության սենյակ հերթական ընտրողի մուտքը,
- Ցույց է տալիս ընտրողին, գնալ այն գրանցման սեղանի մոտ, որին պատկանում է ընտրողների ցուցակում նրա ազգանվան առաջին տառը:

**Ուշադրություն!**

Եթե սարքը հայտնաբերեց, որ ընտրողն արդեն ունի դրոշմակնքում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը, իսկ նրա ով լինելը մտցվելու է Գրառումների գրքում:

**II** Ընտրողը գրանցողի մոտ անցնում է գրանցում:

**Ընտրողների գրանցող.**



- Խնդրում է ընտրողին, ներկայացնել Վրաստանի քաղաքացու Անձնական վկայական/ID քարտ կամ Վրաստանի քաղաքացու Անձնագիր, (Վրաստանի բռնազավթած տարածքից հարկադրաբար տեղաշարժված անձի դեպքում՝ տարհանվածի վկայական Վրաստանի քաղաքացու Անձնական վկայականի հետ միասին): Համընդհանուր ցուցակում գրանցված Եվրամիության անդամ պետության քաղաքացուն պետք է ներկայացնի Եվրամիության անդամ պետության Անձնագիրը,

**Ուշադրություն!**

Եթե համընդհանուր ընտրացուցակում ընտրողի տվյալները չեն գտնում, գրանցողը պարտավոր է ընտրողին մատնացույց անել՝ դիմելու վերջին գրանցողին իր տվյալները վերստուգելու համար: Նշված գրանցողը ընտրողի տվյալները ստուգում է ընտրացուցակում՝, այբբենական կարգով դասավորված ցուցակներից հետո մտցված «Հաշվառման հասցեից հանված է» գրությամբ ընտրողների տվյալներում ( այդպիսինի գոյության դեպքում): Եթե նաև այս դեպքում ընտրողը չի գտնվում ցուցակում, տեղամասում էլեկտրոնային ցուցակների գոյության դեպքում, տվյալների վերստուգման համար պատասխանատու անձը պարտավոր է ընտրողին որոնել էլեկտրոնային ցուցակներում և ընտրողին հաղորդել տեղեկատվություն այն տեղամասի մասին, որտեղ նա հաշվառված է:

**Ուշադրություն.**

Եթե ընտրական տեղամաս ներկայացավ ընտրողը, ով Համընդհանուր ընտրացուցակում ունի «Գտնվում է արտասահմանում» կարգավիճակը, նշված ընտրողը քվեարկությանը կմասնակցի ընդհանուր կարգով:

- Ընտրացուցակում ընտրողի գտնվելը հաստատվելու դեպքում իրականացնում է նրա դրոշմակնքումը (դրոշմակնքում չի կիրառվում կալանքի/ազատազրկման հիմնարկություններում, հիվանդանոցներում և այլ բուժհիմնարկություններում),

**Ուշադրություն!**

Դրոշմակնքում անցնելուց հրաժարվելու դեպքում ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը և նրան ընտրական քվեաթերթիկ (քվեաթերթիկներ) չի տրվում:

- Կատարում է ստորագրություն Համընդհանուր ընտրացուցակի համապատասխան վանդակում, իսկ այնուհետև ընտրողը ստորագրությամբ հաստատում է ընտրական քվեաթերթիկ (քվեաթերթիկներ) ստանալը,
- Ընտրական քվեաթերթիկ (քվեաթերթիկներ) տալիս ստորագրում է դրա (դրանց) հակառակ երեսին համապատասխան սյունակում և քվեաթերթիկը (քվեաթերթիկները) վկայագրում է հատուկ կնիքով:

**Ուշադրություն!**

Գրանցողի գործառույթը փոխանցելու դեպքում, գրանցողը պարտավոր է վերահաշվել ցուցակներում ընտրողների ստորագրությունների և իր կողմից տրված քվեաթերթիկների թվաքանակությունը (նախագահին փոխանցված վնասված քվեաթերթիկների հաշվառումով) և արդյունքը տեղեկացնել նախագահին: Համապատասխանություն գոյություն չունենալու դեպքում պետք է գրի բացատրագիր, որը կցվելու է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններին:

III Ընտրողը մտնում է գաղտնի քվեախցիկ և լրացնում է քվեաթերթիկը: Ընտրական քվեաթերթիկը լրացնելիս արգելված է այլ անձի ներկայությունը:



**Ուշադրություն!**

- Եթե ընտրողը անկարող է անկախ լրացնել ընտրական քվեաթերթիկը, նա իրավունք ունի օգնելու համար գաղտնի քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացի ընտրական հանձնաժողովի անդամից, թեկնածուից, ընտրական սուբյեկտի ներկայացուցչից և դիտորդից(Ընտրական օրենսգիրք - Հոդված 65.3):
- Եթե ընտրողի կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի մոտ վնասվեց ընտրական քվեաթերթիկը կամ հատուկ ծրարը, նրանք դրա մասին պետք է տեղեկացնեն հանձնաժողովի նախագահին: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, գրանցողը պարտավոր է ընտրողի վնասված քվեաթերթիկը փոխարինել նորով: Հանձնաժողովի նախագահը ,ընտրողի ներկայությամբ կտրում է վնասված քվեաթերթիկի անկյունը, գրում է «վնասված է» և ստորագրում է: Հանձնաժողովի նախագահը վնասված քվեաթերթիկը պահում է առանձին (Ընտրական օրենսգիրք - Հոդված 65.4):

IV Ընտրողը գնում է առանին դրված սեղանի մոտ և հատուկ ծրարները հսկողի ցուցմունքով վերցնում է հատուկ ծրարը, դրանում տեղադրում է քվեաթրթիկը (քվեաթերթիկները):



**Քվեատուփը և հատուկ ծրարները հսկողը.**

Այն բանից հետո, երբ կհամոզվի, որ ընտրողը ձեռքում միայն մեկ ծրար ունի, բացում է քվեատուփի ճեղքը և մատնացույց է անում ընտրողին հատուկ ծրարը տեղադրել քվեատուփի մեջ:

V Ընտրողը հատուկ ծրարը զգում է քվեատուփի մեջ:

Ուշադրություն!

- Քվեատուփին չի թույլատրվում միաժամանակ մեկից ավելի ընտրողի մոտենալ:
- Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը իրավունք ունի դիտարկել քվեատուփը, քվեատուփի մեջ հատուկ ծրարներ զցելը:

**Ֆիզիկական վիճակի պատճառով ընտրողի կողմից ձայն տալու ընթացակարգ**

(Վրաստանի Կենտրոնական Ընտրական հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 21-ի №20/2012 Որոշում)

